



ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

1) Տեղյա՞կ եք «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցի» մասին: Այո Ոչ

2) Օգտագործո՞ւմ եք մեթոդաբանություն/փաստաթղթավորում՝ կապված վիճակագրության հետ: Այո Ոչ

3) Ի՞նչ աղբյուրներից եք օգտվում:

- | | |
|--|---|
| <input type="checkbox"/> www.armstat.am (www.armstat.info) | <input type="checkbox"/> Մամուլի հաղորդագրություններ |
| <input type="checkbox"/> www.ArmStatBank.am | <input type="checkbox"/> Հրատարակումներ |
| <input type="checkbox"/> www.ArmDevInfo.am | <input type="checkbox"/> Այլ (խնդրում ենք մասնավորեցնել)..... |

4) Դուք Ձեզ տեղեկացված զգո՞ւմ եք հրատարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների դեպքում: Այո Ոչ

5) Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը՞ պետք է բարելավի:

- | | |
|---|--|
| <input type="checkbox"/> Որակը | <input type="checkbox"/> Համապարփակությունը |
| <input type="checkbox"/> Ցուրածամանակությունը | <input type="checkbox"/> Այլ (խնդրում ենք նշել)..... |

6) Վիճակագրություն արտադրելու համար ՀՀ ԱՎԾ-ն օգտվում է տարբեր աղբյուրներից՝ համատարած հաշվառում, վարչական ռեգիստրներ և ընտրանքային հետազոտություններ.

Խնդրում ենք ներքևում նշել, թե որքա՞ն եք վստահում այդ 3 տվյալների աղբյուրներից յուրաքանչյուրին:

	Բարձր վստահություն	Միջին վստահություն	Ցածր վստահություն
Համատարած հաշվառում			
Վարչական ռեգիստրներ			
Ընտրանքային հետազոտություններ			

Ի՞նչ եք ներկայացնում: Նախարարություն Միջազգային կազմակերպություն
 Լրատվամիջոց Այլ



This project is funded by the European Union


Շնորհակալություն համագործակցության համար.☺

**«ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ»
հարցաթերթի ամփոփում**


Եվրամիության ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում 2015թ. նոյեմբերի 4-ին ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունում վիճակագրական տեղեկատվության սպառողների համար կազմակերպված սեմինարի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 47, որից «Սպառողների համառոտ հետազոտություն» հարցաթերթի լրացմանը մասնակցել է 40-ը կամ նրանց 85.1%-ը:

Ամփոփումից պարզվել է, որ նրանցից 18-ը կամ 45.0%-ը նախարարությունների ներկայացուցիչներ են, 2-ը կամ 5.0%-ը՝ լրատվամիջոցների, 20-ը կամ 50.0%-ը՝ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հարցաթերթի հարցերն առանձին-առանձին ուսումնասիրելով պարզ է դարձել, որ.


1.«Տեղյակ եք «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցի» մասին» հարցին լրացնողերից 36-ը կամ 90.0%-ը պատասխանել է «այո»:




2.«Օգտագործում եք մեթոդաբանություն/փաստաթղթավորում՝ կապված վիճակագրության հետ» հարցին լրացնողներից դրական է պատասխանել է 35-ը կամ 87.5%-ը:



3. «Ի՞նչ աղբյուրներից եք օգտվում» հարցին 40 լրացնողները նշել են 117 նշում, որից 39-ը կամ 33.3%-ը նշել է, որ օգտվում է՝ www.armstat.am (հայելային կայքէջ www.armstat.info)-ից, 21-ը կամ 17.9%-ը՝ www.ArmStatBank.am-ից, 27-ը կամ 23.1%-ը՝ հրապարակումներից, 14-ը կամ 12.0%-ը՝ մամուլի հաղորդագրություններից, 11-ը կամ 9.4%-ը՝ www.ArmDevInfo.am -ից և միայն 5-ը կամ 4.3%-ն է, որ օգտվում այլ աղբյուրներից: (%)




4.«Դուք Ձեզ տեղեկացված զգու՞մ եք հրապարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների դեպքում» : Հարցվողներից ընդամենը 19-ը կամ 47.5%-ն է նշել, որ տեղեկացված է:




6.«Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը պետք է բարելավի» հարցին 40 լրացնողներից եղել է 52 գրառում: Նրանցից 21-ը կամ 40.3%-ը նշել է, որ պետք է բարելավվի որակը, 19-ը կամ 36.6%-ը՝ համապարփակությունը, 7-ը կամ 13.5%-ը՝ յուրաժամանակությունը, 5-ը կամ 9.6%-ն էլ՝ նշել է «այլ»:

(%)



7.«Վիճակագրությունն արտադրելու համար ՀՀ ԱՎԾ-ն օգտվում է տարբեր աղբյուրներից՝ համատարած հաշվառում, վարչական ռեգիստրներ և ընտրանքային հետազոտություններ» հարցին արձանագրվել է 120 նշում , որից 30-ը կամ 25.0%-ը ընդգծել է «բարձր վստահություն», 77-ը կամ 64.2%-ը՝ «միջին վստահություն», 13-ը կամ 10.8%-ը՝ «ցածր վստահություն»:

(%)



Հարկ է նշել, որ լրացնողներից 13-ը կամ 32.5%-ը «բարձր վստահություն» է նշել «Համատարած հաշվառման»-ը, «միջին վստահություն»՝ 26-ը կամ 65.0%-ը, «ցածր վստահություն»՝ 1-ը կամ 2.5%-ը: «Վարչական ռեզիստրներին» «բարձր վստահություն» է նշել 10-ը կամ 25.0%-ը, «միջին վստահություն»՝ 25-ը կամ 62.5%-ը, «ցածր վստահություն»՝ 5-ը կամ 12.5%-ը: «Ընտրանքային հետազոտություններին» «բարձր վստահություն» է նշել 7-ը կամ 17.5%-ը, «միջին վստահություն»՝ 26-ը կամ 65.0%-ը, «ցածր վստահություն»՝ 7-ը կամ 17.5%-ը:

(%)

